## Արձանագրություն 3

### «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/23» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան «20» ապրիլի 2021թ.

ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

**Նախագահ՝**

Պետրոս Մանուկյան

**Հանձնաժողովի անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող աշխատակազմ**

Աննա Մարտիրոսյան

Մարի Ստեփանյան

**Քարտուղար՝**

Երանուհի Սարգսյան

**<u>Օրակարգ</u>**

### 1. <u>Ընթացակարգի գնահատում</u>

1.1 «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/23 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հայտում բացակայում էր ապրանքի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/, իսկ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում /Հավելված 1.1/ նշված չէր առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել էր կասեցնել նիստը, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերոգրյալ մասնակիցները շտկել են առկա անհամապատասխանությունները, սահմանված ժամկետում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ–0*

### 2. *<u>Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.</u>*

2.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/23 ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության մայիսի 4-ի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, «Վերիտաս» ՍՊԸ-ն, «Սիուն» ՍՊԸ-ն, «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն,

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ-ն 2021թ. ապրիլի 23-ին, ժամը 15:00-ին հրավիրվում են գների նվազեցման շուրջ բանակցությունների 1-ին չափաբաժնի մասով, որը տեղի կունենա Նոր Նորքի 3-րդ միկրոշրջան, Գյուրջյան փող., 10 շենք հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0*

Գնահատողհանձնաժողովինախագահ՝ ____________ Պ. Մանուկյան

Հանձնաժողովիանդամներ՝ ____________ Ա. Մարտիրոսյան

____________ Մ. Ստեփանյան

Գնումներըհամակարգող՝ ____________ Ե. Սարգսյան